**ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածի՝ Երևանի զարգացման ծրագիրը փաստաթուղթ է, որը բովանդակում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կանխատեսումները: Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացված են քաղաքի արգացման առաջնահերթությունները, քաղաքային պլանավորման և քաղաքաշինության, ենթակառուցվածքների և շարժունակության, սոցիալական բարեկեցության և մարդկային կապիտալի զարգացման տեսլականը, շրջակա միջավայրի և կլիմայի գործողությունները, քաղաքի թվային փոխակերպման, ինստիտուցիոնալ բարեփոխումների և միջազգային գործընկերության տեսլականը:

Ծրագրով նկարագրվում է նաև քաղաքի ֆինանսական ուրվագիծը, շեշտարդրվում է ռազմավարական հաղորդակցության և հանրային կապերի զարգացման նպատակով տեխնիկական նոր միջոցների համալրման կարևորությունը:

Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի և դրանից բխող առանձին ծրագրերի ու բարեփոխումների արդյունավետ իրագործման նպատակով քաղաքապետարանում կմշակվի և կներդրվի զարգացման և ներդրումային ծրագրերի մոնիտորինգի, գնահատման և հաշվետվողականության ինստիտուցիոնալ մեխանիզմ և շրջանակ: Նպատակը նախաձեռնությունների հաշվետվողականության, թափանցիկության ու արդյունավետ առաջընթացի երաշխավորումն է՝ որդեգրելով քաղաքային կառավարման ոլորտում արդյունքամետ պլանավորման ու կառավարման սկզբունքները:

Մշտադիտարկումը կանցկացվի ծրագրերի իրականացման բոլոր փուլերում՝ ապահովելու, որ բոլոր նախաձեռնություննեն իրականացվեն համաձայն պլանների և ժամկետների: Ծրագրի համար կսահմանվեն հիմնական արդյունքային ցուցանիշներ և պարբերական առաջընթացի հաշվետվություններ կներկայացվեն ծրագրերի թիմերի կողմից: Այս պարբերական հսկողությունը թույլ կտա կանխատեսել հնարավոր խնդիրները և արագորեն համապատասխան գործողություններ ձեռնարկել:

Ծրագրի արդյունավետությունը գնահատելու նպատակով կկազմակերպվեն միջանկյալ և եզրափակիչ գնահատումներ: Դրանք նպատակ կունենան վերլուծել ծրագրերի արդյունավետությունը՝ ելնելով նախապես սահմանված նպատակներից: Գնահատումը նաև կիրականացվի անկախ կողմերի ներգրավմամբ, որոնց առաջարկությունները կօգնեն շարունակաբար կատարելագործել ծրագրերի իրականացման ընթացքը և ապահովել ապագա ծրագրերի համար առավել արդյունավետ մեթոդներ:

Հաշվետվողականության բարձրացման և համայնքի վստահության ամրապնդման համար կկազմակերպվեն պարբերական հրապարակային հաշվետվություններ: Քաղաքի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերում

կիրապարակվեն պարբերական հաշվետվություններ ծրագրերի ընթացքի և ֆինանսական կատարողականի վերաբերյալ:

Ծրագրի նախագիծը 2024թ. նոյեմբերի 8-ին տրամադրվել է Երևանի քաղաքապետի՝ 2023թ. նոյեմբերի 6-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անհատական կազմը հաստատելու և Երևանի քաղաքապետի 2019 թվականի հունիսի 7-ի հ. 1881-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ. 3637-Ա որոշմամբ հաստատված խորհրդի անդամներին, որոնք նոյեմբերի 14-ին հրավիրված նիստի ընթացքում կողմ են քվեարկել ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելուն:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածը, համաձայն որի Երևանի քաղաքապետը տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս հաշվի է առնում Երևանի բնակչության կենսական շահերը, Երևանի զարգացման ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները՝ որոշման նախագծով Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացվում Երևանի զարգացման 2025 թվականի ծրագիրը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ.ԱՎԻՆՅԱՆ**